

ցին զինք շուտով ազատելու զՍարգիս: Եւ նոյն իսկ Ղազարն ու Պետրոս զղջալով նեղացան Յակոբայ, եւ միւս իշխանաց հետ միանալով՝ ժողով կազմեցին, եւ Յակոբայ ըսին վերջին անգամ, որ այլ եւս առանց պատճառանաց իսկոյն Սարգսի ազատութեան թուղթը գրէ: Յակոբ ստիպուեցաւ գրել, եւ Ղազար ու Պետրոս նոյնը եպարքոսին ներկայացուցին, եւ իսկոյն հրաման ելաւ բոլորովին ազատ արձակելու Սարգիսը. բաց ասկէ՝ Յակոբ նաեւ զՍարգիս Եւզոկիոյ Առաջնորդ անուանեց եւ հաստատութեան հրովարտակն եպարքոսէն հանել տուաւ, որպէս զի Պոլիս չգայ: Յակոբ այս հրովարտակները Սարգսին ղրկեց եւ հրամայեց որ ուղղակի Եւզոկիա երթայ յառաջնորդութիւն: Սարգիս այսնամականերն, ինչպէս նաեւ իշխանաց գրութիւններն առնելով ուրախացաւ, գոհացաւ զԱստուծոյ, ներկայացաւ տեղոյն իրաւարարին եւ ազատութեան հրովարտակը ներկայացուց: Բոլոր ծանօթներն եկան զինք շնորհաւորելու:

Որովհետեւ ազատման հրովարտակին մէջ Եւզոկիոյ յիշատակութիւն չկար, Սարգիս չգնաց Եւզոկիա, այլ ուղղակի ի Կ. Պոլիս, եւ իջաւ մօրը տունը, յուրախութիւն ընտանեաց եւ ի խնդութիւն բարեկամաց: Տարի մ'ամբողջ աքսորանաց մէջ կրած տառապանքներն առողջութիւնը խանգարած էին, եւ անոր համար բաւական ատեն տնէն դուրս չելաւ: Ամէնքն իրեն այցելութեան կու գային: Պատրիարքն ալ իր փոխանորդը ղրկեց: